ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE2F-A6BD-4F37-BC0F հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

ԵԴ2/3741/02/26

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

14 ապրիլի 2026թ.
ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով «ԱՄ Քոնստրակտ» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ թիվ ՀՀՔԿ-ԲՄԱԾՁԲ-26/4 ծածկագրով գնման առարկայի բնութագիրն անվավեր ճանաչելու, որպես հետևանք այն հստակեցնելու և գնման ընթացակարգը չեղարկելու պահանջների մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ԱՄ Քոնստրակտ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 2026թ. ապրիլի 5-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ թիվ ՀՀՔԿ-ԲՄԱԾՁԲ-26/4 ծածկագրով գնման գործընթացը չեղարկելու պահանջի մասին:

Դատարանի 2026թ. ապրիլի 9-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Որոշումը ստանալուց հետո հայցադիմումը սահմանված ժամկետում կրկին ներկայացվել է դատարան:

Կրկին ներկայացված հայցադիմումը մակագրվել է դատավոր Գ. Վարդանյանին 2026թ. ապրիլի 10-ին, իսկ Դատավորին հասանելի է դարձել 2026թ. ապրիլի 13-ին:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և 122 հոդվածների պահանջներին համապատասխան և նույն օրենսգրքի 126 և 127 հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եռօրյա ժամկետում հայցադիմումի թերությունները վերացվելու և այն դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը համարվում է առաջին ատյանի դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը:

Հետևաբար՝ հայցադիմումը դատարանում պետք է ընդունված համարել 2026թ. ապրիլի 5-ին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 127, 199-200, 234.5 և 234.6 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ԱՄ Քոնստրակտ» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ թիվ ՀՀՔԿ-ԲՄԱԾՁԲ-26/4 ծածկագրով գնման առարկայի բնութագիրն անվավեր ճանաչելու, որպես հետևանք այն հստակեցնելու և գնման ընթացակարգը չեղարկելու պահանջների մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

Թիվ ԵԴ2/3741/02/26 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2026թ. մայիսի 25-ին՝ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Գրիգորի Վարդանյան

Digitally signed by VARDANYAN GRIGORI 1507850611
Date: 2026.04.14 13:19:23 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am